«Որակավորումների բարելավում՝ ավելի լավ աշխատատեղերի համար»

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝	Զբաղվածություն/միջին մասնագիտական կրթություն և ուսուցում
Տևողություն՝	4 տարի
Իրականացման ժամանակահատված՝	2017-2020
Ընդհանուր բյուջե՝	15մլն եվրո
Բյուջետային աջակցություն՝	13 մլն եվրո
Լրացուցիչ աջակցություն՝	2 մլն եվրո

Ծրագրի նկարագիր

Նպատակ: Աջակցել Հայաստանին բարելավելու իր աշխատաշուկայի արդյունավետությունը, ինչպես նաև աջակցելու միջին մասնագիտական կրթություն և ուսուցում անցած շրջանավարտներ աշխատունակությունը:

Հատուկ նպատակներ:

Նպատակ I: Բարելավել աշխատաշուկայի միջնորդությունը և խորհրդատվական ծառայությունները՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց համար ավելի լավ մուտք դեպի զբաղվածության դաշտ ապահովելու համար:

Նպատակ II: Բարելավել շրջանավարտների զբաղունակության հեռանկարները փորձնական ոլորտում (ՄԿՈՒ գյուղատնտեսական հաստատություններ):

Բարեփոխումների շրջանակ:

- Բարելավել մեխանիզմները տղամարդկանց և կանանց համար աշխատանքի առաջարկին ու պահանջարկին համապատասխանեցնելու համար՝ ուժեղացված աշխատաշուկայի հավաքագրման և վերլուծության համակարգի, գործող Ոլորտային խորհուրդների, ինչպես նաև գործատուների ամրապնդված կարողությունների միջոցով՝ աշխատաշուկայի պահանջները ձևակերպելու ուղղությամբ,
- բարելավել աշխատանք փնտրողների որակավորումն ու զբաղունակությունը Զբաղվածության պետական գործակալության և դրա մարզային մասնաճյուղերի կարողությունները հզորացնելով, և երկարատև կրթության և վերապատրաստման ծրագրերի որակը բարձրացնելով,

- Ուժեղացնել և զարգացնել մասնագիտական կողմնորոշման ազգային համակարգը կարիերայի խորհրդատվությամբ և հետազոտական կարողություններով պետական կրթական հաստատություններում, իրականացնել աշխատանքային ծրագրեր՝ նպատակաուղղված շրջանավարտներին և մարդկանց խոցելի խմբերին,
- Բարելավել մեխանիզմը ՄԿՈՒ գյուղատնտեսական հաստատությունների աշխատանքի առաջարկը պահանջարկի հետ համապատասխանեցնելու համար՝ ուժեղացնելով համագործակցությունը գործատուների/աշխատաշուկայի շահագրգիռ կողմերի միջև ՄԿՈՒ հաստատություններում (կառավարման խորհուրդներ) և զարգացնելով որակի ապահովման համակարգը բոլոր ՄԿՈՒ գյուղատնտեսական հաստատությունների համար,
- Աշխատաշուկայի պահանջներին համահունչ բարելավել ՄԿՈՒ գյուղատնտեսության ոլորտի ուսանողների որակավորումն ու աշխատունակությունը,
- Վերականգնել և վերանորոգել ՄԿՈՒ գյուղատնտեսական կենտրոնները՝ առաջարկելով ժամանակակից հարմարություններ աշխատանքի վրա հիմնված ուսուցման համար, և մշակել աշկերտության համար ազգային ծրագիր՝ որպես թիրախային խումբ ընտրելով ՄԿՈՒ գյուղատնտեսության ոլորտի ուսանողներին: